ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, Ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

N 01/61-7729

«13» 05 2020 թ.

«ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ն. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ
ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ,
Օգոստոսի 23 փող., 21/3ա

Երևանի քաղաքապետարանի և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20.04.2020 թվականին կնքված NN «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/27» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/41» ծածկագրերով պայմանագրերի շրջանակներում ներկայացվել է որակավորման ապահովման բանկային երաշխիքներ:

Երևանի քաղաքապետարանի կողմից կատարվել է բանկային երաշխիքների իսկության ճշտում, որի արդյունքում պարզվել է, որ ներկայացված բանկային երաշխիքները չեն թողարկվել համապատասխան բանկի կողմից և հանդիսանում են կեղծ փաստաթղթեր:

Հաշվի առնելով, որ կատարողը մինչև պայմանագրի կնքումը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ուստի Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանիորեն լուծում է վերոնշված պայմանագրերը՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129